

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԵՂԻՍ Ը. ՄՈՌՇԵՂԵԱՆ ԵՒ ԻՐ ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շարունակութիւն.)

Լեզուի տեսակէտով Եղիայի երկերու կարեւորութիւնը կը կայանայ անոր մէջ, որ կենդանի վկաներ են Բարձր Հայոց եւ յատկապէս Խոտորջրոյ նոյն ժամանակի բարբառին: Բանի որ Եղիա ծնած եւ ուսում առած է Խոտորջուր ու Կարին, քանի որ այս երկու տեղերը շարադրած է վերոյիշեալ գրութիւնները, շատ բնական է նոյն բարբառին ազդեցութիւնը, սակայն ապրած ըլլալով ուրիշ երկիրներ ալ, զլիաւորաբար Պարսկաստան, իր զրքին մէջ երբեմն ուրիշ բարբառներու ազդեցութիւնն ալ անժխտելիօրէն երեւան կու գայ: Դժբախտաբար ինքը չէ գրած պարզապէս իր ժամանակի բարբառովը, որով այս զիրքը բարբառովին թանկագին կ'ըլլար, քանի որ շարադրուած կ'ըլլար արեւմտեան գրաւոր լեզուի սկսելուն փորձերու շրջանին: Ընդհակառակն ինքն ուզած է զրել գրաբար լեզուով, որուն սակայն լիակատար հմտութիւնը կը պակսէր իրեն: Ասով յառաջ եկած է գրաբար լեզու մը, որ իրականին մէջ եղած է անկեալ գրաբարի մը եւ Բարձր Հայքի այն ժամանակի բարբառին խառնուրդը եւ ունի գրաբարի խառնակ շրջանի քերականական անձիշդ եւ սխալ ձեւերու առատութիւն:

Յաւելում նաեւ թէ հեղինակն իբրեւ պատանի միայն նախնական կրթութիւն մը ստացած է: Սակայն ժամանակի ընթացքին ինքնուսուցմամբ հասած է բաւական մեծ զարգացման: Իր զրքին մէջ կը նշմարենք ոչ միայն հայ մատենագրութեան եւ Ս. Գրոց հմտութիւն, այլ եւ արեւելեան արիական եւ երոպական լեզուներու ծանօթութիւն ու ազդեցութիւն: Սակայն եւ այնպէս հայ լեզուի, ոճի եւ ուղղագրութեան տեսակէտով

իր զիրքը պէտք է աւելի կէս գրագէտի գործ նկատել:

Այս ըսուածները կը բացատրեն օրինակները: Սախ երկու թուղթ յառաջ կը բերեմ լեզուն, ոճն եւ ուղղագրութիւնը ցուցնելու համար: Ասոր կը կցեմ համառօտ օրինակներ, զորոնք ամբողջապէս վերջաբանէն քաղած եմ (թղ. 285ա—293բ): Ասոնցմէ զատ կը դնեմ քանի մը քերականական ձեւերու օրինակներ¹:

Եխպայր, այտ խնդիրն խիստ է ինձ, քանզի յերկար պատմելն ձանձրանամ, կարճ բանիւ ոչ առնուա քաղցրութիւն, եթէ ոչ էր իմ կամք բարի վասն նոցա, ոչ խնդրէյի ի Աստուծոյ փոխարէնն իմ յանձին եւ կամ ոչ կամէյի գնալ յերկիրն նոցա, քանզի ես թաղաւորի պէս կ'ապրէյի ի յերկիրն պարսից հաշուէ թէ ես էյի թաղաւոր, արդ ընդէր թողի եւ գնացի, կամէյի գնալ որ անդ այլ առաւել մեծութիւն գտանեմ, ոչ, քանզի Աստուած զիս մեծացուել էր յոյժ այնքան որ ոչ ոք ի նախարարացն բազմէր ընդ շահին բացի յինէն, վասն սիրոյ եւ վասն բարեացն նոցա, մանաւանդ վասն օգտի ազգին իմոյ թողի զայն ամենայն փառքն, պատիւն եւ մեծութիւնն գնացի անդ, քանզի այնպէս կ'հաւատայի թէ իմ թաղաւորք են, եթէ ոչ համարէյի նոցա թաղաւորք իմ ոչ գնայի եւ այլ, միայն թէ որքան որ կամէյի վասն Ռուստաց այս բանիւս յիմայ, այսու կարես յիմանալ այլոցն եւ իմ պատրաստած բարին վասն նոցա. թէպէտ վաղուց զիտէյի թէ Պետրոս թաղաւորն գալոց է վերկել զազգն մեր, բայց առաջի անգամն որ գնացի Շամախի եւ հաստատապէս լսեցի թէ ամենեւին ոռւստ թաղաւորն գալոց է առնուլ յերկիրն պարսից վասն վերկելոյ զմեզ, առ ժամայն ուխտ եղի յանձին իմոյ ասել յամենայն առուր հինկ հայր մեր եւ հինկ ողջոյն Մարիամ յիշատակաւ սրբազանից հնկից վիրացն Յիսուսի Քրիստոսի այսու զլուսաւորութեամբ թէ Տէր Աստուած զմի ի տառանց կենացն իմոց հատ յինէն եւ զիր ի վերայ կենացն Պետրոս թաղաւորին, տէր

¹ Դժբախտաբար մեզի կարելի չէր ուսումնասիրել ամբողջ զիրքը բարբառի տեսակէտով: Այս յատուկ ուսումնասիրութիւն մը կը պահանջէ: Խոտորջրոյ գաւառաբարբառի մասին գրուած ատեն հակ անհրաժեշտ է Եղիայի այս գործը նկատողութեան առնուլ:

տուր նմայ առաւել կարողութիւն, զօրութիւն, որ ամենայն յաջողութեամբ դայ եւ ազատէ զմեր ազգն, եւ այլ, այս ազօթքն սահմանել էյի ասել ի դէմ սուրբ պատարագին . . եթէ ոչ լինէր տեսանել զպատարաք առանձին ասէյի ամենայն աւուրս կենաց իմոց, մինչ ի այն օրն որ հրամանաւ նոյն Պետրոս թագաւորին կապեցին երկաթեալ զերկօսին բազուկան իմ, այնուհետեւ ոչ կարացի բարցրացուցանել զբազկունքս իմ, զազրեցայ այլ առաւել ազոթելոյ: (Թող. 225բ—226բ):

«Հ. ընդէր ձեր կրօնաւորքն ոչ չըջին քարոզել ընդ ամենայն աշխարհ որպէս որ զմերն, վասն զի են պղերգ եւ անհոգ: Պ. մերքն ոչ են ծուլ, բայց պարտական են վասն յիւրոցն, քանզի մեր ազգն է ի մէջ անօրինաց, հազիւ թէ կարեն հօլվել մերոցն, որ պահեն զնոսա հաստատուն ի վերայ քրիստոնէականի հաւատոյն, միթէ ձերքն որ չըջին ընդ ամենայն տեղիս ոչ թէ միայն վասն հաւատոյ է, այլ ժողովելոյ զգանձս եւ լրտեսելո, եթէ միայն վասն հաւատոյ լինէր զնային ի մէջ կոսպաշտից եւ ոչ ի մէջ Հայոց»:

«Հ. . . դուն ասացիր թէ ի դուր չարչարեցաք զքեզ: Բազումք լան ի բերանոյ քումմէ, որ ասացիր թէ Աստուած մի արացէ որ ուսաք զան եւ բռնեն յերկիրն մեր: Պ. այտ յիրաւ է որ բազմիցս ասացի, բայց երբ սկսեցի զայտ բան ասել, յերբոր ըմբռնեցին զիս եւ սկսեցին ի դուր չարչարել, այն ժամանակն ասի. առաջին իմ սէրն եւ իմ կամեցածն վասն ուստաց միթէ ոչ լար, որպէս որ զրեցի ի վերո, միթէ այտ քանտ չարչարանքի, պատժոյ եւ պատուհասի արժանացուցանէ, ինչ ասի, աստուած մի արացէ. միթէ աստուած լսեց ինձ, ո՞չ ճնողքն յորժամ որ բարկանան ասեն զաւակացն իւրեանց աստուած զքեզ մահ տայ եւ այլ, միթէ պատժելի է այն ճնողքն, որ ի ժամ բարկութեան այնպէս ասաց եւ կամ թէ աստուած լսեց այն բարկացած ճնողին զրուցիին, մահացոյց զորդին, ոչ. ո՞ք է որ ոչ բարի կամի ազգին յիւրոյ. ի սկսբաննէ ես կարծէյի թէ ուսաքն քրիստոնեայ եւ եխպայր մեր են, որպէս որ մեր ազգն կարծեն, բայց յերբոր տեսի եւ տեղիկացայ որ ոչ են քրիստոնեայ եւ ոչ զմեզ եխպայր համարեն. յիւրեանց, միայն թէ անուն ունին քրիստոնէութեան, մեր ազգն

նախատեն եւ անիծեալ համարին եւ զկնի մերոցն հրեյեայ ասեն եւ այլ անթիւս, որ ոչ եմբաւ թեւ զամենայն բանս տղեզս, զորս ասեն վասն մեր, տեսանելով իմ զայս ամենայն ասի, աստուած մի արացէ որ սոքայ զան տիրեն մեր ազգին, քանզի խնայեցի զազգն իմ . . .» (Թղ. 258ա—258բ):

Թղ. 285ա. եխպայրք — բանին աչք ձեր — դէմ ունիլ հակառակորթ չարախօսացն — յորժամ որ շահիք — որպէս որ բեր ախան — զի մի անկանիցի զսայ ի ձեռն թշնամեացն ձերոց — որպէս որ սովոր են նոքա — քաղել ի յերկրէ մերմէ զամենայն պիտանի զրեանքն:

Թղ. 258բ. այնժամ որ ոչ ունիք — այնքան որ — այնքան որ ոչ յաղտիք ի նոցանէ — պատրեն մեր միամիտ զազգն:

Թղ. 286ա. այլ յուրիչ եկեղեցի ոչ գոյ — առ այս բանիս օլ որ միաբանի — չի լինիլ որ փափն օգնէ ձեզ — յերբոր դուք միաբանիք — հրաման կանէ թագաւորացն — որ զան եւ փրկեն — ոչ քննէ ապագայն — այլ ինչ ասեն թէ մեք ձեզ համար դուքամք այս յերկիրն — որ դուք փրկիք — լինի քեզ մեծ շահ — սկսէ ծառայել — որպէս որ ձկնորսքն զաղեն զկարգն կերակրօլ — միամիտ անասունն կլնէ զնայ — բայց կարգն մառի ի բերանն — այնուհետեւ յուր որ քարչէ զնայ որսորդն:

Թղ. 286բ. մինչ ի որ հանէ ցամաք եւ մահացնէ — յորժամ որ զկարթն մառի ի բերանն — այնքան բանեցնէ — մինչ ի յիւր բանն կատարի — զրկի ի ունեցածէն — այնպէս հարուն ի դետնի — որ այլ ոչ կարենայ — վարվին ընդ մեր ազգին — իբրեւ որ այս պատմութիւն սկսիք կարդալ — կայ առնելով կարգաք — քանզի ոչ ունէյին թափ զմատունս իմ:

Թղ. 287ա. մտաւ մին ծայրէն լեհաց եւ հասաւ մինչ ի միւս ծայրն — անճար մնացին — տանցքացիքն փախուցին զստանիսլան:

Թղ. 287բ—88ա. տուր ետուն յուսաց — տիրեց Փոնացիդն յերկրի միոջ որ էր կից . . . — տէր լօրէնին տվին — մին շահ լինի յիւրեանց — յորժամ որ պիտոյանայ նոցա — կոտոր մի եղան տեսանեն թէ այն նիչ եղան լաւ կոտոր ունիլ — իբրեւ զինու ողորմելի այրն — ոչ լինի պահել զմիսն, զի ամառն է — այլ ուրիչ առնօղք չիք — վասն հոգեացն հայոց — ոք ոչ ունին զբահանայնս — բնակին

ի քաղքունս երեւելիս, ծածուկ գործն կատարելուց:

Թղ. 288բ. առաքել զլրտեսունս — գիտել զամենայն անցանքն և զորպիսութիւնն — որ ոչ ունեցան օգնական — սահմանեցին զպալիոգունս առաքել զմայրաքաղքունս — օժտեցին զպատկերս և զչարունքս — պատահեցաւ որ — վասն այս պատճառէս:

Թղ. 289ա. վարվէին ընդ քահանայս — այն ժամանակին — տարածեցան յայլ քաղքանց — պատրի արի մէկ ժամանակ մալ մեր քաղքան կաց — ունիմ մէկ յընկեր մի — լաւ մարդ է զնայ բերել տամ — այսպէս վարկորէն չի լինիլ — որ գրեմ իմ յընկերոջն որ գայ, ամօթ լինի — շինեցէք զիր խնդրանաց — քանի մի մարդ:

Թղ. 289բ. կամեցած քաղքունս — մեր նստած տեղն ուրոյն — սկսեցին որսալ — սկսեցին յարիլ — հակառակութիւն լիցէ ուստեք — զկնի հաստատիւն նոցա — օգուտ լինայ — այս բան կատարի:

Թղ. 290ա. մեծ մեղանք է — պարզամիտ ազգն մեր հաւատացուցին — գիտէք որ աշունք է բնազոնի ժամանակ է — փող չկայ — ամէն ամսուս — դեղ յուզեց — զնայ առ դեղածախն — այս գրած հաւէճն առ և բեր ինձ — որ ես ի դոցանէ չունիմ:

290բ. իմ ունեցածին համար գին չեմ խնդրել — դեղրունս առնուլ տվին մարդկանց — այսքան կառնում — քեզ դեղ կանեմ — ճրի դեղ կանէյիք — սկսէ (կը սկսի) ժողովել — մատին (մատչին), պարտ տուր որով կարողանամք կատարել զեկեղեցին — մեք գրեմք փրանկիստան որ փող գայ յերբոր գու գայ հատուցանեմք քեզ:

Թղ. 291ա. դեռ չէ եկել — մեզանէ ուտեն ծախեն — եթէ իրաւ մեր ազգին համար լինէր:

Թղ. 291բ. որ սկսեց քարոզել — այնիչ առն իմ — անկայ ի մտածմունս — ամէն օր զնան:

Թղ. 292ա. տաս և վեց ազդ — եկաւ Ղումցի սարգիսն ի միջո նոցա — պատգամ բերեց — մէկ մէկ ոչխար — կարդացնէ մեր մանկունքն — իշխանութիւն ունենայ:

Թղ. 292բ. մէկ եկեղեցի — ուղղած են քահանայքն:

Թղ. 293ա. վերջն ահայ տեսիք — ամենայն բանս զորս գրեցի — բացեց զաչս իմ:

Թղ. 293բ. զընծայս զայս ի ձեր հրամանուցդ:

Հոլովներ.

Թղ. 206բ. դուք որ ձեզն — մեր ահանն է գերանն — Թղ. 208ա. ի յառաջին գլխոջ — եխպայք — Թղ. 208բ. — մեղրաւ փեթակէն ի դուրս — 209ա. իւրմէն — Թղ. 209բ. պահել զտղայքն իմ — (Թղ. 211ա. 29 համարոջն գրեցիր) — Թղ. 211բ. ում որ կամի — Թղ. 213ա. մտանէ ներսի ատենատունն — Թղ. 214բ. սրայ մէջն — Թղ. 215ա. զմէկ դիու պինչն — Թղ. 215բ. հանեն զթեւերի խաղն ի թիկանց — զերկու ձեռն. Թղ. 216ա. այս մէկ տարէն կամ երկու բան չէ — Թղ. 217բ. այնիչ մայրու մէջ զարկին զգանծն — Թղ. 219բ. մէկ օր այրն զնայ մուրանալ:

Նախադրութիւններ.

Թղ. 206ա. առ յիս — Թղ. 208ա. ես ոչ սասցի հաւատոյ կողմանէ — Թղ. 208բ. որպէս որ մեղուն գարնան ժամանակին — Թղ. 209ա. գրեցին առ դուռն թագաւորին — Թղ. 209բ. թագաւորին բանին համար է — Թղ. 211բ. զայտ թողութեանց վերայ. համտ. նաեւ վերը և վարը:

Բայերու խոնարհումներ.

Թղ. 206ա. վատահամբաւեցիր — պարսաւեցիր — բառեցիր — համառօտելոյ — Թղ. 206բ. զի ապաշուէք — ոչ յեւանիցէր ընդդէմ յարուցելոյն — դատեցիր — Թղ. 208ա. գրել ես թէ — Թղ. 208բ. ընկունու — դատեցիր — Թղ. 209ա. քաղցած մեռաւ — զի առաքեն — նոյն դռան եղօղ Փրանկին — Թղ. 209բ. հատաւ յոյսն զեսրանին ապրելոյ — Թողեց զնայ — պաշտեց զնայ — եխպայրն կասէ թէ — կասէ թէ — պարտն արել — Թղ. 210ա. պարտն արել — Թղ. 210բ. նոր սկսել — անցած աշխատանաց — գրուցն իրաւ գլնիր (կ'ըլլար) — որ ոչ ամօթ լինի — որքան որ պիտոյ էր տվեց — կերակրիր — զանկատ արաւ թէ իմ տվածն ոչ տան — Թղ. 211ա. տիրեց — զի տիրիցէ — զարձաւ եկաւ ի թիֆլիզ — երբոր իմն հատաւ — Թղ. 211բ. այնպէս կհաւատայի — տվեցաւ ի տեսունէ — տվեց — Թղ. 212ա. երես — որ ոչ մնաց տալու — Թղ. 213ա. կաւատամ — չը լինէր — Թղ. 213բ. չլինիլն — թէ ունենամ հազար տարի կեան — սկսէ — սկսեցին — գոօկվի սրայ մէջն — Թղ. 214ա. դիտացել զայս բան — (Թղ. 214բ. գարնեն

եւ տանին զնաւն) — Թղ. 215ա. եթէ աղա-
տիցեր զինք ի մահուանէ — Թղ. 215բ.
հարու ի վերայ թիկանցն — Թէ յիմացվի
— Թղ. 216ա. ճանաչեց — կախվողն — Թղ.
216բ. ընդունեցի — Թղ. 217ա. թոյլ կու
տան դողոյն — Թղ. 218ա. խոստ եկաւ —
յանձն առայ — Թղ. 218բ. իմ սազն դողա-
ցել է — Թղ. 219բ. (մանանէր մատմանաւ
վուճ) ասի — ասին վաղուց հաշտել են:

Բայերու խնդառութիւններ.

Թղ. 206ա. հարցանէր յինէն — Թղ.
206բ. պարսաւել ումեք — 208բ. առ յոր
բանից վերայ որ հարցանիմ — (Թղ. 209ա.
անօրինել յամենայն դործոցն իւր) — Թղ.
210ա. պատմի զիմ արարն — Թղ. 210բ. ես
եւս անցայ այն դրամէն — Թղ. 212ա. կու-
րացեալ է զաչս նոցա — որ ոչ երեւիցի
զսպի վիրացն — Թղ. 215բ.—216ա. մինչ
սկսեցին քննել եւ յիմանալ զպատճառն այն-
ժամ փախաւ զգպլերն:

Վերի օրինակներու մէջ մտադրութեան
շատ կարեւոր կէտ մ'ալ կայ: Միջնաշխարհի
ժողովրդեան, զխաւորաբար Բարձր Հայոց եւ
Խոտորջրոյ բարբառին յատուկ երեւութնե-
րէն է, որ բառերու սկիզբի ձայնաւորներն
իբրեւ պարզ ձայնաւոր դժուարաւ կ'արտա-
բերուին: Անոր համար անոնք սկիզբը միշտ
թեթեւ հազազով ընկերացած կ'ըլլան:
Այս հազազն այնպէս զօրաւոր չէր, որ կէս
զրազէտ մը ստիպուած կարծէր գրել ՚ տա-
ռով: Թէպէտ եւ բարբառներու մէջ իրա-
պէս կայ նաեւ այս զօրաւոր հազազը, զօր-
արբենալ եւ հարբենալ: Այս հազազն այն-
քան թեթեւ է որ կէս զրազէտ մը ստի-
պուած է նախընտրել յ տառը, քանի որ
իր արտաբերութեան մէջ յ տառն առած
էր — ինչպէս հանրածանօթ է — հազա-
գային այս թեթեւ հնչումը: Այս պատճա-
ռով կը զաննք շատերուն մէջէն յիշելու
համար հետեւեալները՝ Թղ. 206ա. յիմա-
նալ — վասն յէր — Թղ. 207ա յըն-
ծայեալ — Թղ. 207բ յերբոր — յորն
Թղ. 208ա. բարի յէ:

Նոյնպէս նոյն բարբառներու մէջ, երբ
երկու ձայնաւոր իրարու կը յաջորդեն դժու-

արութիւն կը զգայնոյն ձայնաւորները լիովին,
պարզ ու բացօրոշ արտաբերելու. հոս եւս
երեւան կու գայ միջանկեալ յ մը. զօր. Թղ.
206բ. սկսէյին — Թղ. 207ա էյի, սիրէյին:

Նոյնա ուսումնասէր եւ ընթերցող ըւ-
լարով հաւաքած էր բաւական թուով տպա-
գիր եւ զրչազիր զրբեր: Կային անոնց մէջ
Թանկարժէք եւ հետաքրքրական կտորներ
եւ նա ստիպուած էր զանոնք պահելու հա-
մար նախանձորգներու եւ հետամուտներու
դէմ կուռիլ: Սովոր էր իր զրած ու հաւա-
քած զրբերու կրկին ցանկ կազմել՝ մին իր
քոյն ունենալու եւ միւսը զրբերու մօտ
(անտուկի մէջ) ձգելու համար (Թղ. 94ա—
94բ, 106բ, 112բ—113բ):

Մուշեղեան ծանօթ էր քանի մը
լեզուի: Չափազանցութիւն է Վեղարաւոր
Հ. Դամիսիանոսի խօսքը թէ՛ «ամէն լեզու
զիտես», (Թղ. 79ա): Լատիներէնի շատ
քիչ տեղեակ էր, կրնար լատիներէն պա-
տարագի սպասաւորութիւն ընել (Թղ.
9ա): Գաղղիերէն կրնար խօսիլ եւ քիչ
մ'ալ գրել (Թղ. 93ա). քանի մը բառ
իր գրութեանց մէջ պահած է («Պալեօզ,
մուսի» եւն): Կենթադրուի թէ պարս-
կերէն եւ նմանապէս թրքերէն լեզուներն
իւրացուցած է, քանի որ Պարսկաստան եւ
Թուրքիա անցուցած է իր կեանքին մեծ
մասը եւ ամէն տեսակ ու ամէն աստիճանի
մարդու հետ յարաբերութեան մէջ մտած
եւ երբեք խօսք չ'ըներ թէ անոնց հետ թարգ-
մանով խօսած ըլլայ: Չեմ կրնար հաստա-
տել թէ հմուտ էր ռուսերէնի ու վրացերէնի,
ժխտելու կուռն մ'ալ չկայ: Ունէր ճարտար
եւ պատրաստարան լեզու մը (Թղ. 276ա):

Գրութեանս ընթացքին ընդունեցայ
Աշոտ Յովհաննիսեանէ եւ Հ. Ներսէս Ակի-
նեանէ Նոյնայի մասին հետեւեալները, զորոնք
չնորհակալութեամբ հոս կը զետեղեմ:

Աշոտ Յովհաննիսեան կը գրէ՝ «Собра-
ние актовъ относящихся къ обзорѣнію
исторіи армянскаго народа», Москва 1833,
Ч. I, стр. 363 բերուած են համառօտ տեղեկու-

Թիւններ Մոսկվայի նախկին արտաքին գործոց նախարարու թեան դիւանում գանուող այն կապոյնների (Թղթերի եւ ձեռագիրների) մասին, որ 1724 թ. Եղիա Մուշեղեանից եւ պատեր Ռոշժորից վերցուած են եղել նրանց ձերբակալման առթիւ: Եղիա Մուշեղեանի ձեռքով գրուած նամակներն ու յիշատակարանները, որ պահուում են ձեռագիր վիճակում, կազմում են մի քանի հատոր: Բովանդակու թիւնը խիստ բազմազան է: Կան պարսկական քառեակներ, պատմական օրագրու թիւններ, բազմու թիւն նամակներ, կրօնական գրու թիւններ եւ այլն: 1916 թուականին անձամբ թերթեւ եմ բոլոր այդ գրու թիւնները: Կարօտ են յատուկ ուսումնասիրու թեան: Դժբախտաբար Յովհաննիսեանի վերոյիշած զիրքը ձեռքս չանցաւ: Հարկ է օր մը հոս ակնարկուած Եղիայի գրու թիւնները ըջօրէն ուսումնասիրել, այն ատեն անոր կեանքին ու գործունէութեան շատ մը մութ կէտերը գուցէ կը լուսաւորուին:

Հ. Ակինեան Լազարեան ճեմարանի Թ. 86 ձեռագրին մէջ (Թղ. 48ա) գտած է հետեւեալը:

«Յամի Տեառն 1740, Նոյեմբեր 28 նոր տօմարիւ Սպահան. հետեւեալ բառարանս դեղոց ի վրայ այբուբենից: Օրինակն էր ի Թղթի գրեալ ի ձեռն դպրի միոջ Ստեփաննոս կոչեցելոյ... եւ իմ Մինաս դեղածախիս տեսեալ խնդրեցի զօրինակն... Այսպէս էր գրած այս բառարանիս սկզբանն... Այս վերջ յիշատակեալ Մինաս դեղավաճառն եկապար է տէր Գրիգորի քահանայիս ջուղայեցւոյ, որ այժմոյս քահանայագործ է զեկեղեցին Շէրմանեցւոց... վերոյ Մինասն հանդուցեալ ի տէր. եւ այս գիրս յիշատակ նորին մնացեալ է ի ձեռն տէր Գրիգոր եկապորն իւրոյ. եւ իմ տրուպս խնդրեցի ի նմանէ օրինակել... զոր ինչ ի նման գալի փոխողրեցի աստ... աղաչեմ... յիշատակել... ապիկար Ելիասս Մուշեղեանց սերունդ Սոսորջոյ ցեղէն Գասպարանց, սեռէ հայկազեան»:

(Վերջ:)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Տ Ի Գ Բ Ա Ն Բ.

Ե Ի

ՀԱՅ-ԼՈՒԿՈՒԼԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Գ.

68Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆ

(Շարունակութիւն:)

Գրոհ/Յ Զ.

Տեղագրական մաս նրկորոյ տարւոյ պատերազմներու եւ զօրաշուքնու:

1.

Մշոյ դաշտագետինը:

Երբ ես 68Դ տարւոյն զօրաշուքնու եւ պատերազմական գործողութիւններու այս երկրորդ մասին զուտ տեղագրական նկարագրութեանն այժմ կ'անցնիմ, բնաւ յոյս մը չունիմ, թէ պիտի կարենամ աներկբայելի արդիւնք մը ձեռք բերել. ինչու որ, ինչպէս արդէն կանխաւ ըսեր էի, այս երկրորդ տարւոյ դէպքերու մասին խօսող մեր բոլոր աղբիւրները մերձաւորապէս իսկ բաւարար չեն առ այդ: Մեր ունեցած սակաւաթիւ դրական տեղեկութիւններն եւ տեղերու դիրքերը, այնպէս ինչպէս կը ներկայացնեն մեզ ուղեգիրները, մի առ մի քննելէ յետոյ միայն կարող ենք լոկ ենթադրաբար ընդունիլ այն ինչ որ մեզ ամենէն աւելի հաւանական կը թուի:

Հետեւաբար, որպէս զի լուկուլլոսի հետեւած ուղին որոշ չափով մը գծել կարենանք հոս, պէտք ենք նախ որոշակի գիտնալ թէ ո՞ւր է սկսաւ նա իւր չուն (մեկնակէտը), եւ երկրորդ թէ ո՞ւր ժամանել էր իւր նպատակակէտը: Այս երկու կէտերը կանխաւ որոշելէ յետոյ միայն կարող ենք մի առ մի հետազօտելու ելլել այն բոլոր հնարաւոր ճամբաները, որոնց վրայէն կարող էր իւր բանակը շարժած ըլլալ լուկուլլոս: Գարձեալ, զօրաշուքնու եւ ընդհարումներու տեւողութեան չափերը, եթէ անոնք ցոյց տրուած են մեր աղբիւրներու մէջ, մեծ արժէք կրնան ունենալ ինքրոյ առարկայ եղող ճամբաներու ստուգութեան համար: